

mConverse մոբայլ բանկային ծառայություններից օգտվելու կանոններ

1. Ընդհանուր դրույթներ.

- 1.1 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ mConverse մոբայլ բանկային ծառայություններից օգտվելու կանոններով /այսուհետ՝ Կանոններ/ սահմանվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաճախորդների հետ կնքված **mConverse մոբայլ բանկային ծառայությունների միջոցով գործառնությունների իրականացման պայմանագրի** հիման վրա մատուցվող ծառայությունների միջոցով գործառնությունների իրականացման կարգը, սահմանափակումները, անվտանգության պահպանման կանոնները, հաճախորդի սարքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև կարգավորվում են mConverse մոբայլ բանկային ծառայությունների մատուցման ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ և հաճախորդի միջև կնքված պայմանագրով չկարգավորված որոշ հարաբերություններ:
- 1.2 Կանոնները գործում են mConverse մոբայլ բանկ համակարգում գրանցված ինչպես «Գևորդ», այնպես էլ «Մուլտի-Վաճառող» կարգավիճակների համար:

2. Կանոններում օգտագործված եզրույթներ և սահմանումներ.

- 2.1 **Բանկ** - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- 2.2 **Հաճախորդ** - Բանկի հետ mConverse մոբայլ բանկային ծառայությունների միջոցով գործառնությունների իրականացման պայմանագիր կնքած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր
- 2.3 **Համակարգ** - mConverse մոբայլ բանկային ծառայություններով նախատեսված գործառնությունների իրականացման համար սահմանված ծրագրային և տեխնիկական միջոցների ամբողջություն
- 2.4 **Ծառայություններ** - Հաճախորդի էլեկտրոնային շարժական սարք/եր/ում ներբեռնված ծրագրային հավելված/ներ/ի և վեբ-ինտերֆեյսի միջոցով գործառնությունների իրականացման հնարավորություն
- 2.5 **Էլեկտրոնային փաստաթուղթ** - Համակարգի օգնությամբ էլեկտրոնային տեսքով ձևավորված փաստաթուղթ
- 2.6 **Էլեկտրոնային թվային ստորագրություն /ԷԹՍ/** - Հաճախորդի կամ վերջինիս բանկային հաշվի տնօրինողի ինքնագիր ստորագրության անալոգ, որը գեներացվում է Համակարգի

միջոցով և օգտագործվում է Բանկ ուղարկվող էլեկտրոնային փաստաթուղթը հաստատելու և ուղարկելու համար

- 2.7 **Վկայականի կոդ /Certificate Code/** - Հաճախորդի նույնական լինելը հավաստիացնող կոդ, որը mConverse ծրագրային հավելվածի ներբեռնումից և տեղադրումից /Application Download & Install/ հետո Բանկի աշխատակցի կողմից Հաճախորդին Համակարգում գրանցելու ժամանակ ավտոմատ կերպով գեներացվում և ուղարկվում է Հաճախորդի էլեկտրոնային հասցեին և օգտագործվում է Համակարգի կողմից համապատասխան հարցման դեպքում
- 2.8 **Գաղտնաբառ** - Հաճախորդի կողմից որոշակի թվերի և/կամ տառերի, նշանների մուտքագրման միջոցով ձևավորվող կոդ, որն օգտագործվում է Համակարգ մուտք գործելիս
- 2.9 **Սարք** - Հաճախորդին պատկանող Android կամ iOS օպերացիոն համակարգի առկայությամբ սմարթֆոն, ինչպես նաև վեբ-ինտերֆեյսով աշխատող սարքավորում, որի միջոցով իրականացվում են Ծառայություններով նախատեսված գործառնությունները
- 2.10 **Էլեկտրոնային հասցե** - «mConverse մոբայլ բանկային ծառայության ստացման հայտում» նշված Հաճախորդի էլեկտրոնային հասցեն, որը պետք է համընկնի Բանկում առկա Հաճախորդի թղթապանակում նշված էլեկտրոնային հասցեի հետ
- 2.11 **Հեռախոսահամար** - «mConverse մոբայլ բանկային ծառայության ստացման հայտում» նշված բջջային հեռախոսահամարը, որը կկիրառվի Ծառայություններով նախատեսված որոշակի գործառնություններ իրականացնելիս, և որը պետք է համընկնի Բանկում առկա Հաճախորդի թղթապանակում նշված հեռախոսահամարի հետ
- 2.12 **Պայմանագիր** – Բանկի և Հաճախորդի միջև կնքված mConverse մոբայլ բանկային ծառայությունների միջոցով գործառնությունների իրականացման պայմանագիր
- 2.13 **Սակագներ** – Բանկի «Սակագներ և դրույքներով» սահմանված Ծառայություններից օգտվելու սակագները:

3. Ծառայության առաջին անգամ ակտիվացումը.

- 3.1 Ծառայություններից օգտվելու համար Հաճախորդը պետք է Բանկում ունենա առնվազն մեկ դրամային հաշիվ և սմարթֆոն՝ Android կամ iOS օպերացիոն համակարգի առկայությամբ և ինտերնետ հասանելիությամբ:
- 3.2 Հաշվի բացակայության դեպքում՝ Հաճախորդի համար բացվում է դրամային հաշիվ և Հաճախորդի կողմից Ծառայության ստացման համաձայնություն ստանալու դեպքում գործընթացը շարունակվում է:
- 3.3 Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է Պայմանագիրը:
- 3.4 mConverse ծրագրային հավելվածի ներբեռնումից և տեղադրումից (Application download & Install) հետո գեներացված Վկայականի կոդն իր էլեկտրոնային հասցեին ստանալուց հետո

Յաճախորդը Բանկի աշխատակցի հետ միասին կատարում է «mConverse ծառայությունների ակտիվացման և օգտագործման ուղեցույցով» սահմանված քայլերի հաջորդականությունը:

3.5 Սմարթֆոնը փոխելու դեպքում Յաճախորդը նոր սմարթֆոնի մեջ ներբեռնում և տեղադրում է mConverse ծրագրային հավելվածը: Հավելված առաջին մուտքի ժամանակ մուտքագրում է իր էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը և Վկայականի կոդը (ինչպես սահմանված է «mConverse ծառայությունների ակտիվացման և օգտագործման ուղեցույցում» առաջին անգամ հավելված մուտք գործելիս): Այս գործընթացից հետո Յաճախորդը կարող է նոր սմարթֆոնի օգնությամբ մուտք գործել mConverse հավելված՝ օգտագործելով իր էլեկտրոնային հասցեն և Գաղտնաբառը:

3.6 Յեռախոսահամարը փոխելու դեպքում Յաճախորդն այդ մասին տեղեկացնում է Բանկին և այցելում Բանկի Գլխավոր գրասենյակ կամ մասնաճյուղ:

4. Յաճախորդի Սարքին ներկայացվող նվազագույն պահանջներ.

- 4.1 mConverse ծրագրային հավելվածից օգտվելու համար՝
 - ✓ Android 2.2.0 և բարձր կամ iOS 6 և բարձր օպերացիոն համակարգով սմարթֆոն,
 - ✓ Ինտերնետ հասանելիություն:
- 4.2 Վեբ ինտերֆեյսից օգտվելու համար՝
 - ✓ Դեպի ինտերնետ մուտք ապահովող արդիական ծրագիր:

5. Անվտանգության պահպանման կանոններ.

5.1 Յաճախորդը լիակատար պատասխանատվություն է կրում՝

- ✓ Գաղտնաբառի գաղտնի պահպանության, շարժական Սարք/եր/ից տեղեկատվության արտահոսքի և/կամ Սարք/եր/ի գողության հետևանքով բացահայտված տեղեկատվության արդյունքում հասցված վնասի և/կամ այլ հետևանքների համար, եթե Յաճախորդը խելամիտ քայլեր չի ձեռնարկել Գաղտնաբառի՝ երրորդ անձանց հայտնի չդարձնելու, Սարք/եր/ի անվտանգության ապահովման համար:
- ✓ Համակարգի շահագործման հետ կապված տեխնիկական, գործառնական և այլ հնարավոր ռիսկերի համար:
- ✓ Յաճախորդը պատասխանատվություն է կրում Համակարգով փոխանցված էլեկտրոնային փաստաթղթերի, դրանցում առկա վավերապայմանների ճշտության և հավաստիության, ինչպես նաև իր կողմից ընտրված կապի միջոցների օգտագործմամբ բանկային գաղտնիք

կազմող տեղեկությունների հնարավոր կորստի /հրապարակման/ կամ երրորդ անձանց այլ կերպ հասանելի դառնալու համար:

- ✓ Յանվարի ամսաթիվում պետք է ակտիվացված լինի երկար ժամանակ /առավելագույնը 5 րոպե (Timeout)/ պարապուրդում հայտնվելու դեպքում գաղտնաբառով վերագործարկման պարտադիր հնարավորությունը: Բացի այդ, Յանվարը պարտավոր է Յամակարգից դուրս գալու դեպքում ձեռքով արգելափակել սմարթֆոնի հասանելիությունը:

5.2 Բանկը պատասխանատվություն չի կրում՝

- ✓ ոչ իր մեղքով Յանվարի կրած վնասների համար, ներառյալ՝ Յանվարի կողմից սխալմամբ լրացված վճարային Էլեկտրոնային փաստաթղթերի՝ Բանկի կողմից կատարումը, եթե այդ փաստաթղթերը պատշաճ կերպով ձևակերպվել և փոխանցվել են Յանվարի կողմից,
- ✓ ոչ իր մեղքով Յամակարգի տեխնիկական և/կամ ծրագրային խափանումների արդյունքում Ծառայությունների ժամանակավոր դադարեցման արդյունքում Յանվարին պատճառված ցանկացած վնասի համար,
- ✓ Յանվարի կողմից վճարման հանձնարարական պարունակող Էլեկտրոնային փաստաթղթի ճիշտ և պատշաճ ձևակերպված չլինելու արդյունքում վճարման հանձնարարականը չկատարելու հետևանքով Յանվարի կրած վնասների համար,
- ✓ այն անձանց հրաժարականի և/կամ ոչ ժամանակին կատարած գործողությունների հետևանքով Յանվարի կրած վնասների համար, որոնց օգտին Յանվարի հանձնարարությամբ կատարվում է գործառնությունը,
- ✓ Գաղտնաբառի օգտագործմամբ Բանկին փոխանցված և Բանկի կողմից կատարված հանձնարարականների կատարման հետևանքով Յանվարի կրած վնասների համար.
- ✓ Պայմանագրով, Կանոններով, ինչպես նաև «mConverse ծառայության ակտիվացման և օգտագործման ուղեցույցով», Սակագներով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

5.3.Բանկը պատասխանատու է Յամակարգին հասանելիությունը արգելափակելու համար՝

- ✓ Յանվարի Գաղտնաբառի կորստի կամ այն երրորդ անձանց հասանելի դառնալու մասին տեղեկանալու, Սարքի /մասնավորապես՝ սմարթֆոնի/ կորստի կամ գողության վերաբերյալ Յանվարի կողմից ծանուցվելու դեպքում:

Հաճախորդը պետք է Գաղտնաբառի կորստի կամ այն երրորդ անձանց հասանելի դառնալու, Սարքի /մասնավորապես՝ սմարթֆոնի/ կորստի կամ գողության վերաբերյալ տեղեկացնի Բանկին ստորև նշված միջոցներով՝

- ✓ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարին՝ (+374 10) 511 211՝ Բանկի աշխատանքային ժամերին,
- ✓ mobile@conversebank.am էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկել նամակ:

Ընդ որում, էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու դեպքում Բանկը համարվում է Հաճախորդի կողմից ծանուցված՝ Բանկի կողմից Հաճախորդի հաղորդագրության ստացման վերաբերյալ հավաստումը Հաճախորդի կողմից ստանալու պահից:

6. Համակարգ մուտքի արգելափակում և ակտիվացում, Ծառայությունների ապաստիվացում.

6.1 Հաճախորդը հնարավորություն ունի իր ցանկությամբ արգելափակել մուտքը Համակարգ հետևյալ կերպ՝

- ✓ Մուտք գործելով վեբ-ինտերֆեյսի mobile.conversebank.am հասցեի «Կարգավորումներ» բաժին և նշելով՝ «Կասեցնել բջջային տարբերակը»: Այս գործողության արդյունքում արգելափակվում է միայն սմարթֆոնի հավելվածի օգնությամբ մուտքը Համակարգ, մինչդեռ վեբ-ինտերֆեյսը մնում է հասանելի:
- ✓ Հեռախոսազանգի, էլեկտրոնային նամակի միջոցով կամ այլ կերպ տեղեկացնելով Բանկին Համակարգին Հաճախորդի մուտքը արգելափակելու ցանկության մասին: Հաճախորդին նույնականացնելուց հետո Բանկն արգելափակում է նրա մուտքը Համակարգ:

6.2 Համակարգի մուտքը ավտոմատ կերպով արգելափակվում է Հաճախորդի կողմից Գաղտնաբառի 5 հաջորդական սխալ մուտքագրման դեպքում:

6.3 Համակարգին իր մուտքն ակտիվացնելու համար Հաճախորդը պետք է կապ հաստատի Բանկի հետ՝ Կանոնների 5.3. կետով սահմանված եղանակներով:

6.4 Ծառայություններն ինքնաբերաբար ապաստիվանում են նաև Հաճախորդի հետ կնքված բոլոր ընթացիկ և/կամ խնայողական հաշվի/հաշիվների բացման և վարման պայմանագրերի դադարեցման կամ կասեցման դեպքում:

7. Ծառայությունից օգտվելու սահմանափակումներ.

- 7.1 Այն դեպքում, երբ Հաճախորդն ուղարկում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը կամ քանակը գերազանցող փոխանցում կամ տվյալ պահին փոխանցման կամ գանձման համար անհրաժեշտ միջոցներ չկան հաշվին, ապա այն չի կատարվում Համակարգի կողմից՝ դրա մասին ավտոմատ տեղեկացնելով Հաճախորդին:
- 7.2 Համակարգի միջոցով արտարժութային փոխանցում հնարավոր է կատարել միայն Հաճախորդի Բանկում ունեցած արտարժութային հաշիվների դեպքում, ընդ որում՝ տարբեր արտարժութային հաշիվների դեպքում՝ արժույթի ավտոմատ փոխարկմամբ:
- 7.3 Համակարգի միջոցով հնարավոր է կատարել միայն ներբանկային և ՀՀ բանկերի միջև փոխանցումներ: ՀՀ այլ բանկ փոխանցումները ենթակա են նախնական հաստատման Բանկի կողմից:

8. Հաճախորդի ծանուցումը.

- 8.1 Կանոնները, - «mConverse մոբայլ բանկային ծառայության ստացման հայտը», ինչպես նաև «mConverse ծառայության ակտիվացման և օգտագործման ուղեցույցը» և Սակագները հրապարակվում են Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքում և հասանելի են Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում և տարածքային ստորաբաժանումներում:
- 8.2 Բանկը վերոնշյալ ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակում է Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքում կամ դրանց վերաբերյալ ծանուցում է Հաճախորդներին իր կողմից սահմանված այլ եղանակներով:

9. Կանոնների ուժի մեջ մտնելը.

- 9.1 Կանոնները, ինչպես նաև դրանց փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքում հրապարակման պահից:
- 9.2 Կանոններում կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի ապաակտիվացնել ծառայությունները՝ այդ մասին նախօրոք՝ 5 /հինգ/ աշխատանքային օր առաջ գրավոր ձևով ծանուցելով Բանկին: